

ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ



Holy Ascension
Armenian Church

ՊՐԻՃՓՈՐԹ, ԻԸՆԵԹԻԻԲԸԹ
ԹԵԼԵՓՈՆ 333-8475

Հովիւ
Արթ. Տ. Սարգիս Գե. Գաշըզեան

1241 Barnum Avenue
Bridgeport, Conn.
Tel. 333-8475

Pastor
Rev. Fr. SARKIS KASHIKJIAN
Res. Tel. 368-3532

Ապրիլ 7, 1966

Գերաշնորհ
Տ. Սիոն Ս. Արթ. Մանուկեան
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի Թեմին
Նիւ Եօրթ

Սրբազան Հայր,

Պրիճփորթի Ս. Համբարձում Հայց. Եկեղեցւոյ Տարեկան Ընդհանուր Անդամական ժողովը տեղի ունեցաւ երկու նիստերով. առաջինը՝ Մարտ 6-ին, երկրորդը՝ Ապրիլ 3-ին Այս զոյգ նիստերու ընթացքին օրակարգի բոլոր հարցերը քննուեցան եւ լուծուեցան: Միայն Միսական Խորհուրդի դադարեալ անդամներու տեղ, նորերու ընտրութիւնը տեղի չունեցաւ, վասնզի նոր Ընտրողական Յանձնախումբն ալ, ջարդ չէ կրցած երկպատիկ ցանկ մը կազմել:

Այս կացութեան մասին, ժամանակին, թէ անձնապէս եւ թէ ալ երկու նամակներով Ձերը Սրբազանութիւնը տեղեակ պահեցի եւ խնդրեցի Ձեր բարեհաճ միջամտութիւնը, որուն իբր հետեւանք պատուարժան Թեմական Խորհուրդի երկու ներկայացուցիչները եւ փոխանորդ Սրբազան Հայրը, եկան տեղւոյն վրայ քննեցին այս հարցը:

Առ այժմ նախկին Միսական Խորհուրդի կազմը յանձնառու եղաւ շարունակել մի քանի քամիսով, որպէսզի Ընտրողական Յանձնախումբը աւելի ժամանակ ունենայ ցանկը կազմելու:

Ապրիլ 3-ի նիստին, կատարուեցաւ Երեսփոխաններու ընտրութիւն: Հետեւեալ անդամներ ընտրուեցան Թեմական պատգամաւորներ չորս տարուան համար:

ՓրօՅ. Յակոբ Էթմէթեան եւ Տօթ. Պերճ Հայրապետեան — Երեսփոխաններ
Պր. Պերճ Խաչատուրեան եւ Պր. Յրէտ Կրաչեան — Անձնափոխանորդներ

Ներքեակ կը ղրկենք, Եկեղեցւոյ Ընդհ. Տեղեկագիրը, Հովիւին եւ Միսական Խորհուրդին տարեկան Տեղեկագրերը, նաեւ Նիւթական Հաշուետուութիւնը եկեղեցւոյ:

Հայցելով Ձեր Հայրական օրհնութիւնները, կը մաղթենք Ձերը Սրբազանութեան առողջ արեւ շատութիւն եւ յաջողութիւն Ձեր Աստուածահաճոյ գործերուն:

Մատչիմ ի համբոյր Ձեր Ս. Աջոյն
Մնամ
Որդիական սիրով եւ յարգանք
Աստուծոյ Սարգիս Գաշըզեան
Հովիւ եւ նախագահ